



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ
В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

LINGUISTICS AND PHILOLOGY

1(66)

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ - 2023

**Ա. ՄՈՐԱՎԻԱՅԻ «ՉՈՉԱՐԱ» ԵՎ «ԱՐՀԱՄԱՐՀԱՆՔ» ՎԵՊԵՐԻ
ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ՌՈՒՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԼԵԶՎԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԶԱՐՈՒՀԻ ՈՍԿԱՆՅԱՆ

Ներածություն

Սույն հոդվածի հիմնախնդիրներն են Ա. Մորավիայի «Չոչարա» և «Արհամարհանք» վեպերի բնագրի, հայերեն և ռուսերեն թարգմանությունների բառապաշարի առանձին, ինչպես նաև ընդհանուր զուգադրական ուսումնասիրությունը, գեղարվեստական ստեղծագործությունների թարգմանությունների կարևորումը հայերենի բառապաշարի հարստացման և համալրման գործում: Նորույթը պայմանավորված է հետևյալ գործոններով. առաջին անգամ գիտական մակարդակով ներկայացվում է հիշյալ վեպերի հայերեն թարգմանությունների բառապաշարի բազմաբնույթ և բազմակողմանի զուգադրական ուսումնասիրություն, որը իրականացվում է երեք լեզուների բառաքերականական մակարդակում: Նորույթ է նաև այն, որ զուգադրական ուսումնասիրությունը կատարվում է ոչ միայն լեզվական, այլև՝ որոշ դեպքերում լեզվամշակութային համատեքստում:

Հիմնաբառեր՝ բարբառներ, առածներ, ասացվածքներ, դարձվածային միավորներ, նորաբանություններ, շարադասություն, թարգմանություն:

Ա. Մորավիան գրական վաստակի շնորհիվ իր ուրույն տեղն է զբաղեցնում իտալական մշակույթի համայնապատկերում: Նա պատկանում է իտալացի գրողների այն շարքին, որոնց հաջողվեց քաղաքական և սոցիալական գործունեությունը համատեղել գրական ստեղծագործական աշխատանքին: Հեղինակի ուղին ընթացել է մտավոր, հասարակական և գրական գործունեության զուգահեռությամբ «Չոչարա» վեպը Մորավիայի թերևս ամենահաջողված ստեղծագործություններից է: Այն յուրատեսակ խոստովանություն է հակամարտության և այն աղետների ու դժբախտությունների մասին, որ հարուցում է պատերազմը:

Մորավիա գրողին ձևավորում է իտալական, իսկ հետագայում

Եվրոպական բարոյական դիմադրությունը, որն էլ նախանշեց նրա հումանիզմի յուրօրինակ ուղին և դարձրեց XX դ. ամենակարկառուն իրապաշտ գրողներից մեկը:

Մորավիայի ստեղծագործական երևակայությունն ու գեղարվեստական աշխարհընկալումը զերծ չեն շրջապատող իրականությունից. նա իր ստեղծագործությունների հերոսներին, իրադարձությունները, կենսակերպը վերցնում է իրական կյանքից: Գրողի հենց այդ իրական, պարզ, ոչ քողարկված և ոչ շինծու ձեռագիրն է, որ Մորավիային դասում է նեոռեալիզմի ստեղծագործական ուղղության ներկայացուցիչների թվին:

«Չոչարա» և «Արհամարհանք» վեպերը հայերեն է թարգմանել անվանի թարգմանիչ Գևորգ Վիրապյանը, որի շնորհիվ էլ հայ ընթերցողը հնարավորություն ստացավ ծանոթանալու իտալական գրականության մի շարք ստեղծագործություններին: *(Գևորգ Վահանի Վիրապյան, հայ անվանի թարգմանիչ, ավարտել է Մոսկվայի օտար լեզուների ինստիտուտի իտալերեն և գրականության թարգմանչական և գերմաներենի մանկավարժական ֆակուլտետները: Գրողների միության անդամ):* «Չոչարա» վեպը լույս է տեսել 1962թ., իսկ «Արհամարհանքը»՝ 1966 թ.:

«Չոչարա» վեպի գեղջկուհի Չեզիրայի կերպարը մեծ հաջողություն բերեց հեղինակին: Ժողովրդի ծոցից ելած կինը պատմում է վեպի իրադարձությունները, և դա անում է ժողովրդախոսակցական և բարբառային խոսելաոճին բնորոշ լեզվով:

Վեպի գեղարվեստական նկարագրությունն աչքի է զարնում լեզվական ուրույն առանձնահատկություններով:

Վեպի վերնագիրն իսկ առաջին հայացքից խորհելու և բացատրություն փնտրելու անհրաժեշտություն է առաջացնում: Իտալացի ընթերցողի համար, բնականաբար, վերնագիրն ավելի քան հասկանալի է և բնական, սակայն միջին գիտելիքներով օժտված օտարազգի ընթերցողը դժվար թե իսկույն կռահի, թե ինչ է նշանակում *ciociara* բառը, ավելին, դժվար իմանա, որ *ciociara*-ն (հայերեն նույնպես *չոչարա*) Հռոմից հարավ գտնվող լեռնային վայրի՝ Չոչարիայի բնակչուհու անվանում է: *Չոչարայի* հիմքում ընկած է *չոչա* բառը, որը ոտնամանի տեսակ է՝ բաղկացած ներբանից և գրեթե մինչև ծնկները հասնող քաթանե ճտքերից, որոնք կապվում են թելերով: Հետևաբար, ընթերցողի ընկալումը դյուրին դարձնելու նպատակով և՛ հայերեն, և՛ ռուսերեն թարգմանությունների մեջ սկզբից իսկ բացատրվում է բառի իմաստը և ծագումը:

Պետք է նշել, որ վեպի վերնագիրը տարբեր լեզուներում

թարգմանվել է տարբեր կերպ. օրինակ՝ հայերենում և ռուսերենում այն պահպանել է իր սկզբնական անվանումը՝ «Չոչարա» և “Чочара”, մինչդեռ անգլերենում հանդիպում ենք “Two women” (Երկու կանայք), իսպաներենում՝ “La campesina” (Գեղջկուհին) տարբերակներին:

Վեպի առաջին իսկ տողերից կարելի է կռահել, թե ինչ լեզու է օգտագործել հեղինակը՝ արտահայտելու իրողությունները, փաստերը, հերոսների հոգեվիճակը, նրանց պատկանելությունն այս կամ այն սոցիալական դասին, նրանց անհանգստությունը և մտորումները: Դրա վառ ապացույցն է առաջին տողերում տեղ գտած հին և գոեհիկ երգից քաղած մի երկտող.

Quando la ciociara si marita, a chi tocca lo spago e a chi la ciocia.

Հայերեն թարգմանությամբ երկտողը հնչում է այսպես.

«Երբ չոչարան ամուսնանում է, մեկին թելերն է փալիս, մյուսին՝ չոչաները»:

Ռուսերեն թարգմանության մեջ հանդիպում ենք սույն տարբերակը հետևյալ կերպ.

Когда чочара выходит замуж, одному отдаст веревку, другому-чочу.

Վեպի համար հատկանշական է ժողովրդախոսակցական բառերի և բարբառային ձևերի այնպիսի կիրառություններ, որոնք չափազանց պատկերավոր, դիպուկ, իրական և համոզիչ կերպով բնութագրում են հերոսներին և այն իրավիճակները, որում նրանք հայտնվում են:

Ըմբռնելու համար հեղինակի այս լեզվական բառաշերտի օգտագործման ընտրությունը՝ պետք է նախևառաջ հասկանալ, թե ինչ հարաբերակցության մեջ են գտնվում միմյանց հետ վեպի բովանդակությունը, նրա լեզուն, հերոսները և միջավայրը: Ինչպես արդեն նշել ենք, վեպի գործողությունները սկսվում են ծավալվել Հռոմում և հետագայում տեղափոխվում Ֆոնդի գյուղ:

Գլխավոր հերոսուհին գեղջկուհի է և իրեն բնորոշ գեղջկական պարզ, անբռնազբոսիկ ժողովրդախոսակցական և բարբառային լեզվական միավորների միջոցով արտահայտում է կյանքի իրողությունները, արձագանքում նրա այս կամ այն իրադարձությանը: Ինչպես հայտնի է, ժողովրդախոսակցական բառերի օգտագործումը պայմանավորված է սովյալ ժողովրդի մտածողությամբ, արտահայտում է նրա մշակույթը, կենցաղը, բարքերը, սովորույթները և այլն: Դրանք հիմնականում կենցաղագրական բառեր են՝ հարադիր, հարադրվող և կրկնավոր բարդություններ, բնածայնական բառեր, ձայնարկություններ, հեզնական արտահայտություններ, որոնք առկա են հատկապես դարձվածքներում և դարձվածային արժեք ունեցող

բառակապակցություններում, անեծքներում, օրհնանքներում, լուտանքներում և այլն: Բերենք մի քանի օրինակ.

- *li mortacci loro, 'sti figli di mignotte ... (p. 10) // -Աստված տա՛ սաստիկն այդ լրբի զավակները...* (էջ 10-11) // *Чтоб они сдохли, все эти сукины дети!* (с. 309):

Li mortacci loro կամ *li mortacci tua* արտահայտությունը Լացիո մարզի բառապաշարին հատուկ հայիոյանք է, որը հնչեցվում է տվյալ անձի նախնիների հասցեին: Հռոմում և նրա շրջակայքում այն ունի բավականին լայն կիրառում: Նույն նախադասության մեջ հանդիպում ենք իտալերեն ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ մեկ այլ օրինակի՝ *'sti figli di mignotte*, որում *'sti* բաղադրիչը իտալերեն *questi* (այս, սրանք) ցուցական դերանվան կրճատ ձևն է և բնորոշ է խոսակցական տարբերակին, իսկ *figli di mignotte* արտահայտությունը հայիոյանք է և նշանակում է «լրբի զավակներ»: Ի դեպ, *mignotta* բառը հետաքրքիր ծագում ունի, սերում է ֆրանսերեն *mignon* բառից, որը նշանակում է *նազելի*:

Mignotta sei tu, brutta zozza, vigliacca, disgraziata...(p. 26) // - Լիրբը դու ես, *հողեմ գլուխդ, պոռնիկի մեկը* (էջ 32) *Сама ты потаскушка, грязная уродина, подлая баба!* (с. 327):

«*Հողեմ գլուխդ*» կամ «*գլուխդ թաղեմ*» անեծքն ունի *մեռնես, թաղեմ քեզ* նշանակությունը: Սակայն հարկ է նշել, որ բնագրում տեղ են գտել ոչ թե անեծքներ, այլ մի շարք հայիոյանքներ, որոնք համապատասխանաբար առկա են նաև ռուսերեն թարգմանության մեջ: Հավանաբար Գ. Վիրապյանը հարկ է համարել ավելացնել վերոնշյալ անեծքը՝ խոսքն առավել տպավորիչ և արտահայտիչ դարձնելու համար, և միևնույն ժամանակ խուսափել մի շարք լուտանքների թարգմանությունից:

Ա. Մորավիայի հիշյալ երկու վեպերի հայերեն թարգմանությունը ամենացայտուն կերպով երևան է հանում մեր լեզվի դարձվածային միավորների հարուստ և գործածության տեսակետից բազմազան հնարավորությունները:

Severino fa il sarto e noialtri ci arrangiamo... (p. 119) // Սևերինոն դերձակ է, իսկ մենք... մենք էլ հափուռչփուռ ենք անում ... էջ (155) // Северино портной, ну а мы... мы устроиваемся как можем... (с. 428):

Հափուռչփուռ անել արտահայտությունը ևս զուտ խոսակցական բնույթի է նշանակում է՝ 1) «դեսից-դենից գտնել՝ ձեռք բերել, 2) հայթայթել, հափշտակել, գողանալ» (Ե.Բ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Երևան, 1976 թ., էջ 852), մինչդեռ բնագրում կիրառված *arrangiarsi* բայը թարգմանվում է հարմարվել և պատկանում է լեզվի գրական շերտին: Իսկ ռուսերեն տարբերակը լիովին

համարժեք է բնագրին: Ուստի կարող ենք նկատել, որ Գ. Վիրապյանը հատուկ է ընտրել վերոնշյալ դարձվածային միավորը՝ խոսքը առավել դիպուկ և պատկերավոր դարձնելու նպատակով:

Chi non muore si rivede (p. 281) // Ջանսաղություն լինի, մարդը միշտ էլ մարդուն կհանդիպի (էջ 369) // Человек с человеком всегда сойдется (с. 600):

Բնագրում օգտագործված արտահայտությունը *chi non muore si rivede* կարելի էր թարգմանել լույս քեզ *չեանողին*, իսկ ռուսերենն ունի համապատասխան՝ *не умрем, так встретимся; живы будем не помрем* տարբերակները: Փնտրելով *Ջանսաղություն լինի* դարձվածային միավորը բառարաններում՝ նրա փոխարեն հանդիպեցինք համարժեք *ջանդ սաղ լինի* դարձվածային միավորին, որն օգտագործվում է որպես «մխիթարական, հանգստացնող խոսք (դու ողջ լինես, նա ողջ լինի)» (Ա. Մ Սուքիասյան, Ս.Ա. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 1975, էջ 504), հետևաբար կարող ենք ենթադրել, որ թարգմանիչը ջանդ սաղ լինի դարձվածային միավորի փոխարեն ինչ-ինչ պատճառներով կիրառել է ջանսաղություն լինի տարբերակը:

Թարգմանական գրականության մեջ ևս, հաճախ ստեղծագործական նպատակներով գործածվում են ժողովրդախոսակցական ոճի, նույնիսկ բարբառային բառեր և արտահայտություններ:

Այդպիսին են ոչ միայն սովորական բառերն ու արտահայտությունները, այլև առածներն ու ասացվածքները, քանի որ դրանք կազմված են լինում ժողովրդի բանավոր ստեղծագործության հիման վրա: Առածներն ու ասացվածքները, ինչպես հայտնի է, պատկերավոր ու սեղմ խոսքեր են, որոնք այս կամ այն կերպ արտացոլում են տվյալ հասարակության կենցաղը, հարաբերությունները, մարդկանց բնավորությունը և այլն: Դրանք աչքի են ընկնում իրենց այն առանձնահատկությամբ, որ նշանակում է քիչ խոսքով շատ բան ասելու բացառիկ ուժ, պարզ, կոնկրետ ձևերով տալ պատկերավոր բնութագրումներ, ասելիքը դարձնել դիպուկ, նպատակային և այլն: Առածներից և ասացվածքներից՝ ժողովրդական բանահյուսության երկարակյաց և կենսունակ այդ ստեղծագործություններից զերծ չէ նաև Մորավիայի լեզուն:

Այժմ ուսումնասիրենք հետևյալ օրինակը:

Eh, lo sapete il proverbio: meglio un asino vivo che un dottor morto; e anche quest'altro: meglio l'uovo oggi che la gallina domani; e ancora quest'altro: promettere e mantenere è da uomo vile (p. 71) // Մի խոսքով,

ինչպես առածում է ասվում. *ավելի լավ է կենդանի էշը, քան թե մեռած դոկտորը*, կամ *ավելի լավ է էսոր ձուն, քան թե վաղը հավը*, կամ մի ուրիշը. *խոսք փայլն ու խոսքը կարարելը վահակոպյանների գործն է (էջ 92)* // *Вы знаете пословицу: лучше живой осел, чем мертвый доктор; или еще другую: лучше яйцо сегодня, чем курица завтра; а вот еще и одна: только трусы сдерживают обещания* (с. 377):

Meglio un asino vivo che un dottor morto իտալական ասացվածքը *Dizionario Garzanti di Italiano (Il Grande Dizionario Garzanti della Lingua Italiana, Milano, Garzanti Linguistica, 2006, p. 787)* բառարանը մեկնաբանում է հետևյալ կերպ՝ *Non vale la pena di rovinarsi la salute con lo studio eccessivo՝ չարժե փչացնել առողջությունը՝ շարք բան իմանալու և սովորելու համար*, ինչպես նաև իտալերենի բառապաշարում կարող ենք հանդիպել *È meglio vivere come uno stupido che morire gentile* (բոց. *ավելի լավ է ապրել հիմարի պես, քան մահանալ բարեկիրթ*): Հայերեն թարգմանության մեջ ականատես ենք լինում ասացվածքի բառացի թարգմանությանը, այսինքն՝ իտալերենի բաղադրիչները բառացի փոխարինվել են հայերեն համարժեքներով՝ պահպանելով բնագրի կառուցվածքը, և ուստի հայերենում այդ ասացվածքը չունի և ոչ մի իմաստ: Առավել ուշադրության է արժանի *dottore* բառի թարգմանությունը. իր առաջնային իմաստով այն նշանակում է *բժիշկ*, օրինակ՝ *chiamare il dottore-բժիշկ կանչել*, իսկ որպես երկրորդ իմաստ՝ *la persona che ha conseguito una laurea –բարձրագույն կրթություն (դիպլոմ) ունեցող անձնավորություն* և օգտագործվում է գերազանցապես որպես հապավում մասնագիտություն ցույց տվող գոյականների առջև, օր.՝ *dottore in medicina*, որը նկարագրական ձևով կթարգմանենք *բարձրագույն բժշկական կրթություն ունեցող անձնավորություն*: Սույն իմաստն այս բառին անցել է լատիներենից, որում ունեցել է՝ *doctōre – docēre* (*Il Nuovo Etimologico, Dizionario etimologico della lingua italiana, Bologna, Zanichelli editore S.p.A., 1999, p. 495.*) ձևը, և նշանակել է համապատասխանաբար *դասախոս* և *սովորեցնել*: Ռուսերեն թարգմանության մեջ այնպես, ինչպես հայերենում, վերը հիշատակված այս ասացվածքը թարգմանվել է բառացի՝ *лучше живой осел, чем мертвый доктор* արտահայտությամբ, որը, ինչպես հայերեն թարգմանությունում, սխալ է: Մինչդեռ ճիշտ և տեղին կլիներ կիրառել՝ *лучше дураком жить, чем ученым помереть* (*T.Z Cherdantseva, J. I Retsker, G. F. Zorko, Italyansko-russkij frazeologicheskij slovar, M., «Russkij jazik», 1982, p. 77. (In Russian)* տարբերակը, որը միանշանակ արտացոլում է բնագրում տեղ գտած ասացվածքի իմաստը: Պետք է նշել, որ հայերենում համարժեք մոտավոր միտքն արտահայտում են հետևյալ

ասացվածքները. *խելք ու դարդ չունեցողը էրզան (երկար) կապրի* կամ հետևյալը՝ *շար բան հմանաս, շուր կծերանաս* :

Սույն հոդվածում անհրաժեշտ է անդրադառնալ հայերենի թարգմանության մեջ տեղ գտած շարք բառային նորակազմությունների և բառային պատճենումների:

Ամեն մի կենդանի լեզվի բառապաշարը անընդհատ համալրվում է նոր բառերով: Այդ գործընթացը տեղի է ունենում հիմնականում երկու ճանապարհով՝ ներքին և արտաքին, որոնք թույլ են տալիս ըստ անհրաժեշտության կազմելու կամ այլ լեզուներից փոխառելու նորանոր բառեր և դրանցով համալրել և հարստացնել բառապաշարը:

Թարգմանություններում նորակազմությունների մի մասը ածանցմամբ ստեղծված բառեր են. *աննրբախնդիր, senza scrupoli-սքեմուլեն* (բոց. առանց խղճի, անխիղճ կամ առանց խղճի խայթի) բառի դիմաց, *անհարմարակեցիկ՝ disordinato-неустроенный* (անկարգ, թափթփված) ածականի դիմաց, *անընդմիջվող՝ perpetuo-постоянный*՝ որը ընդհանրապես բացակա է բնագրում, *տեսարանայնություն-спettacolare-характер зрелища* և այլն, մյուս մասը՝ ածականի գերադրական աստիճան կազմող *ամենա* մասնիկով կազմված մի քանի բառեր, որոնք պայմանականորեն են դիտվում որպես նորակազմություն. *ամենավարթարագույն՝ peggiore-неприятный* (ամենավատթար) ածականի դիմաց, որը թերի է, քանի որ, ինչպես հայտնի է, ըստ հայերենի քերականական կանոնների՝ *ամենա* և *(ա)գույն* ածանցների համատեղումը սխալ է, *ամենարուն խորքից՝ dal fondo stesso- из самой глубины* (էության խորքից) արտահայտության դիմաց, մեկ այլ մասը՝ բառապատճենումներ կամ համաբանական կազմություններ. *վերնաշխարհ-неземной мир* բառապատճենումը՝ կազմված բնագրի *sopramondo* գոյականի նմանակությամբ, ինչպես նաև *արտահայեցողություն՝ extroverso-экстропективно*, որը հավանաբար կազմվել է *ներհայեցողություն* գոյականի համանմանությամբ:

Նորակազմությունների մյուս խումբը կերտված է բառաբարդման եղանակով. *եղջրածև- in forma di corna- согнутые как рога, միջերկրականցիներ-popoli meditteranei-средиземноморские народы, գորշապերև-ulivi grigi-серебристо-серые, հոգեպաշար-esitante-не решаюсь, կարտոֆիլամամիշ-schiacciate-машина для протирания картошки, կոնֆետաման-bomboniera di porcellana-бонбоньерка, շագանակագուլ-marrone dorato- золотисто-каштанового цвета* և այլն:

Այժմ անդրադառնանք «Արհամարհանք» վեպին, որը լույս է տեսել 1954 թ.՝ նեոռեալիստական շարժման ամենաձաղկուն ժամանակաշրջանում: Այն աչքի է զարնում կերպարների խոր

հոգեբանական և փիլիսոփայական վերլուծությամբ, քանի որ արտացոլում է իտալական միջին բուրժուական մտավորականությանը պատկանող քաղաքացու կյանքի արժեքները, նպատակները, հավակնությունները, հարմարվողականությունը, քաղքենիությունը, ձգտումները, հարաբերությունները մարդկանց հետ:

Ի տարբերություն «Չոչարայի»՝ «Արհամարհանք» վեպի լեզուն ոչ մի կերպ չի առնչվում ժողովրդախոսակցական լեզվի տարրերին, չնայած այստեղ ևս հեղինակին հաջողվում է կախարդել ընթերցողին՝ տանելով նրան իր հերոսների աշխարհը: Մորավիան խոսում է հասկանալի լեզվով և իր ստեղծագործությունները նախևառաջ ուղղում է Իտալիայի մտավորականությանը: Նա իր առջև խնդիր է դնում՝ օգնելու իտալացի հասարակությանը՝ գլուխ հանելու համար իրեն շրջապատող աշխարհից (A. Moravia, *Mastera sovremenoj prozy, M, Progress, 1978, str. 12*): «Արհամարհանք» վեպում Մորավիայի գրական լեզուն համեմվում է բուրժուական լեզվին և բառապաշարին հատուկ տարրերով: Ինչպես արդեն նշել ենք, «Արհամարհանքի» իրադարձությունները ծավալվում են Հռոմում և պատկերում են այն ժամանակաշրջանի բուրժուական հասարակության կենսակերպը, և թերևս ակնհայտ է, որ հեղինակը ստեղծագործում է գրական իտալերենով:

Ինչպես նշում է Լ. Եզեկյանը՝ «Գրական բառաշերտի մեջ են մտնում այն բառերը, որոնք գործ են ածվում գրական լեզվի չափորոշիչների պահանջներով, նրա կիրառության սահմաններում: Գրական շերտի բառերը հիմնականում օգտագործվում են գիտական, վարչական, պաշտոնական, հրապարախոսական և գեղարվեստական գրականության մեջ, առավելապես հեղինակային խոսքում, երբեմն նաև առօրյա-խոսակցական ոճերում՝ առանձին կերպարների խոսքի ոճավորման նպատակով» (Լ. Կ. Եզեկյան, Հայոց լեզու, Երևան, ԵՊՀ հրատ., 2007 թ., էջ 138-140):

Ընդհանրապես պետք է նշել, որ տվյալ ժամանակաշրջանի Իտալիայի բուրժուական միջավայրի լեզվին բնորոշ է անտեղի բարդ և արհեստական, կարծրատիպային և վերացական լինելը: Այդուամենայնիվ, Մորավիային հաջողվել է կատարելապես համադրել գրական լեզվի և մանրբուրժուական խավերի ոճերին հատուկ տարրերը, և, չնայած վեպի կառուցվածքը շարահյուսական տեսակետից բավականին բարդ է թվում, այնուամենայնիվ, այն ընթերցողին ներկայանում է պարզ և հստակ կերպով: Բերենք հետևյալ օրինակը՝ համապատասխանաբար հայերեն և ռուսերեն թարգմանություններով.

Ma in quel tempo, sotto la pressione di quelle crudeli preoccupazioni, quest'immagine così promettente e lusinghiera cedette il luogo ad una

diversa, quella di un poveruomo impigliato in una patetica e meschina trappola, il quale non aveva saputo resistere all'amore per sua moglie e aveva fatto il passo più lungo della gamba e chissà per quanto tempo ancora sarebbe stato costretto a dibattersi nelle angustie mortificanti della penuria di denaro (p. 22) // Սակայն այդ օրերի դաժան հոգսերը իմ գիտակցությունից դուրս մղեցին այնքան հրապուրիչ ու խոստումնալից այդ կերպարը և նրա տեղը դրին մի այլ կերպար՝ աղքատ ու ողորմելի մի մարդու, որը խճճվել է կրքերի ցանցում և թաղվել մանր ձախորդությունների տղմուլը: Նա չկարողացավ ընդդիմանալ կնոջ սիրուն և այդ պատճառով ստիպված եղավ ուրքը մեկնել ավելի երկար, քան ունեցած վերմակն էր: Եվ ով գիտե, թե նա դեռ որքան պեք է տառապի փող չունենալու այդ ստորացուցիչ վիճակից (էջ 430) // Но тягостные заботы вытеснили из моего сознания этот столь заманчивый и многообещающий образ и заменили его другим образом жалкого неудачника, запутавшегося в сетях страсти и погрязшего в тине мелких забот; несчастный, он не смог устоять перед любовью к жене и решился на шаг, превышающий его силы, и кто знает, как долго еще придется ему страдать от унижительного отсутствия денег (с.7):

Ինչպես կարելի է նկատել, բնագրում նախադասության կառուցվածքը բավականին բարդ է և ծանրաբեռնված. այն կազմված է ստորադասական նախադասություններից, որոնք միմյանց են կապվում *il quale* (որը) դերանվան և *e* (*և*) շաղկապի միջոցով: Հատկանշական է, որ հայերեն թարգմանության մեջ այդ պարբերությունը ներկայանում է երեք առանձին նախադասություններով:

Եթե «Արհամարհանք» վեպը փորձենք որևէ լեզվաբանական քննության ենթարկել, ապա առաջին հայացքից մեզ կթվա, թե դա ապարդյուն և անօգուտ աշխատանք է, քանի որ նրանում չկա ոչ մի արտահոց երևույթ: Սակայն եթե ուշադիր քննենք վեպում օգտագործված բառապաշարը, ապա կնկատենք, թե որքան է այն պարզ, դյուրըմբռնելի, բազմերանգ, արտահայտիչ, պատկերավոր և միևնույն ժամանակ՝ արդիական:

Եզրակացություն

Հիմնվելով կատարված ուսումնասիրության արդյունքերի վրա՝ կարելի է եզրակացնել, որ Ա. Մորավիայի երկու վեպերի հայերեն թարգմանությունները կարևոր ձեռքբերում են ոչ միայն հայ թարգմանական գրականության, այլև նոր գրական հայերենի համար: Ռուսերեն թարգմանությունները, անշուշտ, իրենց արժանի տեղն են զբաղեցնում ռուս թարգմանական հարուստ գրականության համայնապատկերում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

REFERENCES

1. Աղայան Է. Դ., Արդի հայերենի բացատրական բառարան, Հայաստան հրատարակչություն, Երևան, 1976:
Aghayan E. D., Ardi hayereni bacatrakan bar'aran, Hayastan hratarakchownt'yown, Erevan, 1976: (in Armenian)
2. Աղայան Է. Դ., Լեզվաբանության հիմունքներ, Երևան, Համալսարանի հրատարակչություն, 1987:
Aghayan E. D., Lezvabanowt'yan himownqner, Erevan, Hamalsarani hratarakchownt'yown, 1987: (in Armenian)
3. Եզեկյան Լ. Կ., Հայոց լեզու, Համալսարանի հրատարակչություն, Երևան, 2007:
Ezekyan L. K., Hayoc lezow, Hamalsarani hratarakchownt'yown, Erevan, 2007: (in Armenian)
4. Մորավիա Ա. Չոչարա, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1989:
Moravia A. Chochara, Erevan, «Sovetakan grogh» hrat., 1989: (in Armenian)
5. Սուքիասյան Ա. Մ., Գալստյան Ս. Ա. Հայոց լեզվի դարձվաձաբանական բառարան, Երևան, Համալսարանի հրատարակչություն, 1975:
Sowqiasyan A. M., Galstyan S. A. Hayoc lezvi dard'vac'abanakan bar'aran, Erevan, Hamalsarani hratarakchownt'yown, 1975: (in Armenian)
6. Моравия А., Римские рассказы, Чочара, Москва, «Правда», 1987.
Moravija A., Rimskie rasskazy, Chochara, Moskva, «Pravda», 1987.
(in Russian)
7. Moravia A., La Ciocara, Milano, Tascabili Bompiani. 2010.
8. De Mauro, Dizionario della lingua italiana, Milano, Paravia. 2000
9. Garzanti Linguistica, Dizionario Garzanti italiano, Milano. 2006
10. Padre Ohanian V., Dizionario italiano-armeno, Venezia, San Lazzaro, Casa Editrice Armena. 1995.
11. Sensini M., La grammatica della lingua italiana, Milano. Arnoldo Mondadori. 1997.

ЗРУИ ВОСКАНЯН - ОБЩАЯ ЯЗЫКОВАЯ ХАРАКТЕРИСТИКА И ОСОБЕННОСТИ АРМЯНСКОГО И РУССКОГО ПЕРЕВОДОВ РОМАНОВ А. МОРАВИА «ЧОЧАРА» И «ПРЕЗРЕНИЕ

Ключевые слова: диалекты, пословица, поговорка, фразеологизм, неологизмы, синтаксис, перевод.

Предметом исследования данной статьи является общая языковая характеристика и особенности армянского и русского переводов романов А. Моравиа «Чочара» и «Презрение». Язык романа «Чочара» характеризуется использованием народных слов и диалектных форм, пословиц и поговорок, фразеологизмов, а также неологизмов, описывающих героев и ситуации, в которых они оказываются, в чрезвычайно яркой, точной, реальной и убедительной манере. В отличие от «Чочара», язык романа «Презрение» никоим образом не связан с элементами языка народной речи, литературный язык романа отличается элементами, свойственными буржуазному языку и лексике. Язык романа характеризуется наличием достаточно сложных синтаксических структур, однако представлен читателю ясно и просто. Армянские переводы вышеуказанных романов А. Моравия являются важным достижением не только для армянской переводческой литературы, но и для нового литературного армянского языка.

ZARUHI VOSKANYAN - GENERAL LINGUISTIC CHARACTERISTICS AND FEATURES OF THE ARMENIAN AND RUSSIAN TRANSLATIONS OF A. MORAVIA'S NOVELS "CHOCHARA" AND "CONTEMPT".

Keywords: *dialect, proverb, saying, phraseological unit, neologism, structure, translation.*

The subject of the study of this article is the general linguistic characteristics and features of the Armenian and Russian translations of A. Moravia's novels "Chochara" and "Contempt". The novel "Chochara" is characterized by the use of folk words and dialectal forms, proverbs and sayings, phraseological units, as well as neologisms that describe the characters and the situations in which they find themselves in an extremely vivid, accurate, real and convincing manner. Unlike "Chochara", the language of the novel "Contempt" is in no way connected with elements of the language of folk speech; the literary language of the novel is distinguished by elements characteristic of bourgeois language and vocabulary. The structure of the novel seems quite complex from a syntactic point of view, but it is presented clearly and simply to the reader. Thus, we can conclude that the armenian translations of two novels of A. Moravian are an important achievement not only for armenian translated literature, but also for the new literary armenian language.

Ներկայացվել է՝ 20.09.2023 թ.
Գրախոսվել է՝ 10.11.2023 թ.